

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	3
2.	ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	4
2.1.	ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	4
2.2.	ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ	5
2.3.	ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ	9
2.4.	ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	9
2.5.	ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ և ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	13
2.6.	ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	13
3.	ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ	14
3.1.	ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ	14
3.2.	ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ	9
4.	ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄ	10
5.	ՀՀԶԾ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ	11

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Շիրակի մարզի Պետք համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՁՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀՁՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում, ՀՁՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀՁՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Պետք համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՁՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է բնակավայրի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՁՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի բնակավայրը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՁՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀՁՀԾ-ն ներկայացնում է Պետք համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: Այն Պետք համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀՁՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը: Հարկ են համարում նշել նաև, որ ՀՁՀԾ-ի իրականացման համար համայնքին օդ ու ջրի պես անհրաժեշտ է պետական կամ այլ աջակցություն, քանի որ ծրագրի առաջնահերթ նպատակը արտագաղթի կասեցումն է գյուղից: Սա բնակչության առաջնահերթ պահանջն է ՏԻՄ-ից, որից հետևում է, որ տնտեսական բաղադրիչը այս դեպքում երկրորդ պլան է մղվում: Մաղթում են բոլորիս խաղաղություն, արդյունավետ աշխատանք և ծրագրերի իրականացում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գետք համայնքի տարածքը գտնվում է Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան մասում Արմավիր- Գյումրի խճուղու վրա, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1828 թվականին և մինչև 1945 թվականը կոչվել է Դահառլի: Հիմնադրման օրվանից գյուղի բնակչությունը եղել են գրեթե բացառապես հայեր: Գետք համայնքի կենտրոնը Գետք բնակավայրն է: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 125 կմ, մարզկենտրոնից՝ 10 կմ: Մինջբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Դարիքջանյան, Երազգավորս, Ազատան համայնքների հետ: Համայնքն ունի շատ կտրտվածության դաշտեր: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգելի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է, ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի առկա տնային տնտեսությունները 138-ն են, մշտական տնային տնտեսությունները՝ 153, բնակչության թիվը կազմում է 624 մարդ, այդ թվում տղամարդիկ 321 և կանայք՝ 303: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում: Մինչև 15 տարեկան երեխաներն ու 63-ից բարձր ծերերը կազմում են բնակչության 22%-ը:

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Միջոցառում քանակ
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	624
	Տղամարդիկ	321
	Կանայք	303
	0-15 տարեկան	86
	15-22 տարեկան	86
	23-62 տարեկան	400
	63 և բարձր տարիքի	52
2.	Կենսաթոշակառուներ	64
3.	Փախստականներ	0
4.	Հաշմանդամներ	18
5.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	14
6.	Անօթևան ընտանիքներ	3
7.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	18
	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	77
8.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	97
9.	Ընտանեկան նպաստ ստացող	21
10.	Գործազուրկներ	82

Համայնքի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ եւ հողագործությամբ:

Անասնապահությունը զբաղվում է հիմնականում խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ՝ կաթի և մսի արտադրությամբ, քիչ՝ խոզաբուծությամբ:

2016թ-ի հունվարի 1-ի տվյալներով համայնքում կա 509գլուխ խոշոր եղջերավոր (որից 230 գլուխ կովեր) և 46 գլուխ մանր եղջերավոր անասուն, 117 գլուխ խոզ, 1070 թռչուն: Արտադրվել է՝ 350տ. կաթ, 11տ. միս, 1620տ. հացահատիկ, 200տ. բանջարեղեն, 1000տ. կարտոֆիլ: Շուկայում վաճառվել է համախառն արտադրանքի 65,3 տոկոսը: Անասնապահությունը զբաղվում է հիմնականում խոշոր եղջերավոր անասունների, քիչ քանակությամբ խոզերի աճեցմամբ:

Արտադրվող տավարի և խոզի միսը իրացվում է Գյումրի և Երևան քաղաքների շուկաներում մսի առևտրով զբաղվող առանձին մսագործերի միջոցով, որոնք միջնորդ օղակ են հանդիսանում քաղաքի շուկաներում մսի մշտական առևտրով զբաղվող մսագործների և գյուղացու միջև: Կաթը 40 – 50%-ով վերամշակվում է տնայնագործական եղանակով՝ ընտանիքի կարիքների համար, մնացած մասը վաճառվում է վերամշակման արտադրամասերին 110 – 130 դրամ արժեքով:

Համայնքը ունի անասնաբույժ, որը տարվա ընթացքում կատարում է հիվանդությունները կանխարգելող պատվաստումներ, որոնք պատվիրվում են պետության կողմից: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքը կարելի է գնահատել բավարար: Անասունների հիվանդություններից բավականին տարածված է ճիճվակրությունը, թոքերի հիվանդությունը:

Հողագործությամբ ճյուղը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրությամբ: Համայնքի հողային հաշվեկշիռը բերված է աղուսյակ 2-ում: :

Աղուսյակ 2

Համայնքի հողային հաշվեկշիռը

Համայնքի վարչական տարածքը՝ որից՝	921 հա
Վարելահողեր՝	613.13 հա
Արոտավայրեր՝	134.22 հա
Այլ հողեր-	18.95 հա
Ճանապարհներ՝	44.5 հա
Որից դաշտային ճանապարհներ՝	17.0 հա
Տնամերձ հողեր՝	55.0 հա
Ոռոգվող հողեր՝	54.0 հա
Սեփականաշնորհված հողեր՝	551.45 հա
Հուշարձանի տարածք՝	0,3 հա
Դպրոցի տարածք՝	1,05 հա
Գերեզմանոց՝	1,2 հա
Գյուղացիական տնտեսությունների թիվը՝	229 հա
Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը՝	2.25 հա

Շուկա է հանվում հացահատիկ, կարտոֆիլ, ծաղկակաղամբ և այլ բանջարեղեն: Սակայն հացահատիկի իրացումը հատկապես դժար է, քանի որ հանրապետություն է ներկրվում հացահատիկ³ տեղում արտադրված հացահատիկի ինքնարժեքից էլ ցածր գնով, իսկ գյուղացու ունեցած հացահատիկը հաճախ ստիպված օգտագործվում է, որպես անասնակեր: Չկան կարտոֆիլի և բանջարեղենի իրացմամբ կամ վերանշակմամբ զբաղվող կազմակերպություններ: Գյուղացիները իրենց արտադրած բանջարեղենի և կարտոֆիլի վրա մինչև 30% տրանսպորտի ծախսեր են կատարում⁴ այն փոքր քանակներով շուկա հասցնելու և իրացնելու համար: Որպես անասնակեր օգտագործվում է ծղոտը և առվույտը:

Գետք գյուղի դաշտավարությունը հիմնականում մասնագիտացել է հացահատիկի արտադրության բնագավառում : Նախկինում հացահատիկի բերքատվությունը անցնում էր 40-50 ցենտներից, սակայն այժմ այն կրկնակի անգամ ցածրացել է: Պատճառները բազմաթիվ են: Համայնքը մեծ վնասներ է կրում կարկտահարության պատճառով: Չափազանց կարևոր խնդիր է համայնքում տեղադրված հակակարկտային կայանների թվի ավելացումը: Ներկայումս համայնքի տարածքում տեղադրվել են երկու հակակարկտային կայաններ, որոնց շահագործումից երևում է ,որ բավականին արդյունավետ են: Անհրաժեշտ է ևս մի քանի կայանների տեղադրում համայնքի ամբողջ տարածքը կարկտահարությունից պաշտպանելու համար:

Տարիներ շարունակ մեծ խնդիր է եղել համայնքում օգտագործվող հացահատիկի և կարտոֆիլի սերմանյութի որակը: Սակայն այժմ կառավարության կողմից իրականացվող սեմերի տրամադրման ծրագիրը բավականին արդյունավետ է և վիճակը բարելավվել է:

Գյուղը ռեալ հնարավորություն ունի եռակի – քառակի անգամ ավելի շատ բանջարեղեն և կարտոֆիլ արտադրելու, սակայն իրացման դժվարությունների պատճառով մարդիկ խուսափում են արտադրանքի ծավալների ավելացումից, քանի որ եղել են տարիներ, որ արտադրված բանջարեղենը՝ կարտոֆիլը, կաղամբը չեն կարողացել իրացնել, մնացել, փչացել է: Արտադրողները մեծ վնասներ են կրում, վարկային պարտավորությունները չեն կարողանում կատարել՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

<p>Ներկայումս համայնքի ունեցած գյուղատնտեսական տեխնիկան ամբողջությամբ մինչեքրկարշարժյան ժամանակահատվածում արտադրված, նախկին կոլտնտեսության ունեցած տեխնիկայի մնացորդներն են: Այսպես՝ հացահատիկի 5 կոմբայններից աշխատում են միայն երեքը, որոնք, ինչքան էլ ներդրումներ են կատարում լիարժեք վերանորոգելու համար, այնուամենայնիվ ինչպես գյուղացիներն են ասում, - «Ինչքան հավաքում, այնքան ցանում են»: Նույնն է նաև տրակտորների, բեռնատար ավտոմեքենաների և մյուս գյուղագործիքների առումով: Գյուղը չունի հացահատիկի և կարտոֆիլի ցանքատարածությունները սրսկելու ագրեգատ:</p>

Ամենամեծ խնդիրը կայանում է նրանում, որ գյուղացիները չունեն ռեալ հնարավորություններ նոր տեխնիկա գնելու համար, քանի որ գյուղատնտեսությունը համայնքում ցածր եկամտաբերություն ունի: Այն չի կարող բավարարել կուտակման թեկուզ աննշան մասհանում կատարելու տեխնիկայի ձեռքբերման համար:

Գյուղում ոռոգման համակարգը կա, սակայն նորոգման անհրաժեշտություն ունի: Գյուղի վարելահողերի մոտ 200 հա-ը ոռոգվում է Կառնուտի ջրամբարից սնվող ոռոգման համակարգից: Համակարգի բետոնից կիսախողովակների մի մասը քայքայված են, որը լուրջ խոչնդոտ է հանդիսանում այդ տարածքների ոռոգումը կազմակերպելու խնդրում: Գյուղի ոռոգման ամենալուրջ խնդիրը ջրհան կայանի վերանորոգման խնդիրն է: Մինչև երկրաշարժը ջրհան կայանը ջուր էր մատակարարում գյուղամերձ տարածքի 180 հա հողատարածություններին, որոնք ոռոգվում էին մասամբ անձրևացմամբ, մասամբ էլ խողովակաշարների միջոցով: Ջրհան կայանը թալանվեց և հիմա այդ տարածքները զրկված են ոռոգելու հնարավորությունից:

Ոչ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններ գյուղում չկան: Կա խառը ապրանքների առևտրի երկու օբեկտ: Գյուղը մոտ է գտնվում Գյումրի քաղաքին և բնակչությունը հիմնականում օգտվում է քաղաքի օբեկտների ծառայությունից:

Համայնքը գտնվում է Գյումրի - Արմավիր ավտոմայրուղու վրա: Ավտոտրանսպորտը բավականին լավ է սպասարկում բնակչությանը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2000 թվականին շահագործման է հանձնվել 180 գյուղի աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի շենքը, ուր սովորում են 62 աշակերտներ: Դպրոցը համալրված է 19 մասնագետ մանկավարժներով, այն ապահովված է սպորտդահլիճով, խմելու ջրով, գործում է կոյուղին: Սակայն թերի է տարածքի բարեկարգումը, չունի նիստերի դահլիճ: Կա ջեռուցման համակարգի արդիականացման խնդիր: Դպրոցն ունի նախակրթարան, ուր հաճախում են հինգ երեխաներ:

Մշակույթ, սպորտ

Գյուղի մշակույթի տունը երկրաշարժի հետևանքով վթարային էր դարձել, իսկ 2014 թվականին փլվել է: Նույն շենքում գործում էր նաև գրադարան 6000 հատ գրքային ֆոնդով: Ներկա դրությամբ համայնքում գրադարան և մշակույթի տուն: Նախատեսվում է կառուցել համայնքային կենտրոն, որտեղ կտեղակայվեն գրադարանը, մշակույթի տունը, փոստը և գյուղապետարանը: Համայնքի մարզական կյանքը ևս պասսիվ է, մարզադաշտը ունի հիմնանորոգման կարիք:

Առողջապահություն

Բուժկետը տեղակայված է հիմնական շինությունում, բարենորոգված է, ջրով և կոյուղով ապահովված: Ունի 1 բուժաշխատող: Գյուղը օգտվում է Ախուրիկ գյուղում գործող ամբուլատորիայի ծառայությունից:

Միջնակարգ դպրոց	գտնվում է լավ վիճակում
Բուժ կետ	գտնվում է լավ վիճակում, սակայն չունի սարքավորումներ
Նախակրթարան	գտնվում է դպրոցին կից
Գրադարան	շենքային պայմաններ չկան

2.3 Համայնքում ներկայումս իրականացվող ծրագրեր չկան:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Գետքի համայնքի բյուջեն կարող է լրացուցիչ եկամուտներ ապահովել գյուղում բիզնես միջավայրի բարելավման, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման միջոցով: Նպատակային աշխատանք է նախատեսվում բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Հինգ տարվա ընթացքում ակնկալվում է պետական աջակցություն բյուջեի միջոցների ավելացման համար: Իսկ համայնքը հնարավոր բոլոր միջոցներով աջակցելու է փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեությանը, դրանց թվի ավելացմանը: Առաջին քայլերն է արվելու զբոսաշրջիկներին դեպի համայնք ներգրավելու ուղղությամբ, չնայած որ գյուղը տեսարժան վայրեր, պատմական հուշարձաններ չունի, սակայն կարելի բնակարաններում սենյակներ տրամադրել Գյումրի քաղաքի զբոսաշրջիկներին:

Աղյուսակ Համայնքի 2014-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	13077,6	14462.3	15911,5	16028.9	19530	22150	23760	25380
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ (1+2+3)*	13077.6	14462.3	15911.5	16028.8	19530	22150	23760	25380
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	3080.0	3685,1	4013.9	3929,3	4000	4120	4230	4350
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2108.1	2743,6	2780.9	2780,9	2800	2800	2800	2800
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	-	-	33.5	33.5	50	50	50	50
	Հողի հարկ	2108.1	2608.3	2747.4	2747.4	2750	2750	2750	2750
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	917.9	859,5	1176.0	1066.4	1100	1200	1300	1400
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	917.9	1024.9	1176.0	1066.4	1100	1200	1300	1400
1.3	Ապրանքների	54.0	104.5	57.0	82	100	120	130	

	օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ								150
	Տեղական տուրքեր	54.0	104.5	57.0	82	100	120	130	150
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍԱՇՆՈՐՀՆԵՐ	7879.5	8572.2	9972.6	9972.6	10000	12000	13000	14000
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	7879.5	8572.2	9972.6	9972.6	10000	12000	13000	14000
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	2118.1	1940,0	1925.0	2127	5530	6030	6530	7030
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	2113.1	1920,0	1925.0	2117	2500	3000	3500	4000
3.5	Վարչական գանձումներ	5.0	10,0	00		20	20	20	20
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից		10,0	00		10	10	10	10
3.9	Այլ եկամուտներ*	1631.6	1361	3358	3000	3000	3000	3000	3000
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	1631,6	1361	3358,0	3000	3000	3000	3000	3000

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագրի իրականացնելու համար նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Շիրակի մարզի Գեղք համայնքում այն ունի հետևյալ պատկերը: Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է պետության կողմից համայնքին տրվող ֆինանսական համահարթեցման գումարի աճով, որը 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականին կազմել է 16.3%, իսկ 2016թ-ին և 2017 թվականին մնացել է նույնը:

Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 0.7%, 2018թ.՝ 21.8%, 2019թ.՝ 13.4%, 2020թ.՝ 7.2%, 2021թ.՝ 6.8%) ձևավորվում են հիմնականում պետական բյուջեից համայնքին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվին, հույս ունենալով, որ կառավարության 2017 թվականի համար պլանավորված դադարի շրջանը հնարավորություն կտա փոքր համայնքներին հաջորդ չորս տարիներին աջակցություն ստանալու պետությունից, ուտքի կանգնելու և սեփական ուժերով ապահովելու համայնքի հետագա զարգացումը :

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 19. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր (Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ)

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի կենտրոնացման ոլորտ	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների				
					2017	2018	2019	2020	2021
1	Կառավարման ապարատի պահպանում	աշխատող	6	44800	8800	9000	9000	9000	9000
2	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	ընտանիք	10-25	3500	700	700	700	700	700
3	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	Ծառայություններ, ապրանքներ	X	23200	4000	4200	4500	5000	5500
	Ընդամենը			71500	13500	13900	14200	14700	15200

2.5 Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի , հնարավորությունների և

սպառնալիքների ՈԻԹՀՍ վերլուծություն

Համայնքի ուժեղ եւ թույլ կողմերը

Ներքին գործոններ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Համախմբված համայնք	1. Ոռոգման ցանցի ոչ բավարար վիճակ
2. Գյուների-Արմավիր ճանապարհին մոտ գտնվելը	2. Գազաֆիկացման բացակայություն
3. Ախուրյան կայարանին մոտ գտնվելը	3. Արոտավայրերի պակաս
4. Մարդկային ռեսուրսների բավարար առկայություն	4. Մշակույթի օջախի բացակայություն
5. Տրանսպորտային միջոցների առկայություն	5. Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ
6. Մարզկենտրոնին մոտ գտնվելը	6. Արտազնա աշխատողների մեծ քանակ
7. 111հա. ոռոգելի հողերի առկայություն	7. Վերամշակող ձեռնարկությունների բացակայություն
8. Գյուների քաղաքին մոտ գտնվելը	8. Հակակարկատային համակարգի ամբողջականացման անհրաժեշտություն
9. Երիտասարդության բարձր կրթական մակարդակ	9. Տարածքը գերխոնավ է, իսկ ջրահեռացման համակարգերը ենթակա են վերականգնման
10. Տնամերձների ինքնահոս ոռոգման համակարգի առկայություն	10. Գյուղ. տեխնիկայի պակաս
11. Ախուրյան գետի ափին գտնվելը	11. Գործազրկության բարձր մակարդակ հատկապես երիտասարդության շրջանում:
	12. Արտագաղթ
	13. Գյուղմթերքի իրացման դժվարություններ-պահանջարկի բացակայություն
	14. Ծանր սոցիալական և կենցաղային պայմաններ

Արտաքին գործոններ	
Հնարավորություններ	Վտանգներ
1. Մանր ձեռնարկատիրության զարգացում	1. Բնակչության արտագաղթ
2. Տարբեր ներդրումներ (դոնոր կազմակերպությունների միջոցով)	2. Աղետներ հեղեղումներ, երկրաշարժ, քամի
3. Վերամշակող ձեռնարկությունների հիմնում	3. Տնտեսական ճգնաժամ
4. Ոռոգելի հողերի ավելացում	4. Շրջափակում
5. Անասնազլխաքանակի ավելացում	
6. Գյուղմթերքի իրացման շուկաների ավելացում	

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Համայնքի ռազմավարությունը նպատակաուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, բնակչության տարեցտարի ավելացող արտագաղթի կասեցմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, 1988 թվականի երկրաշարժի հետևանքները վերացնելուն: Համայնքի առաջիկա հինգ տարիների զարգացման ուղղություններն են գյուղի տարածքի բարեկարգումը, գյուղատնտեսության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, ճանապարհաշինությունը: Համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեն 33676.8 հազար դրամ է կազմում, որից 15977.4 հազար դրամը վարչական բյուջեն է, 17699.4 հազար դրամը ֆոնդային բյուջեն է: Համայնքի սեփական եկամուտները 5938.9 հազար դրամ է կազմում, այսինքն բյուջեի 17.6%-ը: Բյուջեի սեփական եկամուտների միջին տարեկան աճը կազմում է 2,0%: Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Հիմնական նպատակները

1. Համայնքի ջրաչորացման (դրենաժային) համակարգի վերականգնում, գյուղի տարածքից զրոնտային ջրերի բարձրացման հետեւանքով առաջացած ավելորդ խոնավությունը հեռացնելու համար:
2. Կառնուտի ջրամբարից սնվող եւ ինքնահոս ոռոգման ջրի համակարգի կիսախողովակների վերանորոգում, որը թույլ կտա բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:
3. Գազաֆիկացում, որով կլուծվի բնակչության ջեռուցման խնդիրը, կբարձրանա կենսամակարդակը:
4. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:
5. Հուշարձանի գրատախտակի վերանորոգում, տարածքի բարեկարգում:

**Համայնքի հնգամյա ծրագրում ընդգրկված ծրագրերը ըստ սահմանված առաջնահերթությունների
ունեն հետևյալ կառուցվածքը:**

Հազար դրամ

N	Աշխատանքների անվանումը	Պահանջվող գումարը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուր
1	Համայնքային կենտրոնի կառուցում	40000		գյուղապետարան այլ աղբյուր
2	Ոռոգման համակարգի վերանորոգում	3500	2017-2021	գյուղապետարան այլ աղբյուր
3	Հակակարկտային կայանների ձեռքբերում	5000	2017- 2021	գյուղապետարան
4	Համայնքի գազաֆիկացում (7կմ.)	250000		Ֆինանսավորման աղբյուրը պարզ չէ
5	Համայնքի ջրաչորացման (դրենաժի) համակարգի վերանորոգում (2կմ)	17000		Ֆինանսավորման աղբյուրը պարզ չէ
6	Գիշերային լուսավորության համակարգի վերանորոգում	2500	2017-2021	Ֆինանսավորման աղբյուրը պարզ չէ
7	Գյուղատնտեսության զարգացում	7500	2017-2021	գյուղապետարան Այլ աղբյուր
8	Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում	12500	2017 -2021	գյուղապետարան այլ աղբյուր
9	Աղբահանություն	1250	2017-2021	գյուղապետարան
10	Հուշարձանի վերանորոգում	1150	2017-2021	գյուղապետարան
	Ընդամենը	340400		

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

«Համայնքային կենտրոնի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության և ՏԻՄ –ի կապի սերտացում, կուլտուր-մշակութային, սպորտային և այլ մասսայական միջոցառումների կազմակերպման համար դահլիճ:						
Ծրագրի անմիջական նպատակ Գյուղում կառուցել շենք որտեղ կգործի համայնքապետարանը, կկազմակերպվի երիտասարդության ակտիվ մշակութային մարզական կյանքը, կտեղակայվի համայնքի գրքային և էլեկտրոնային գրադարանը, փոստը:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2500.0	20000.0	17500.0	-	-	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Համայնքային կյանքի ակտիվացում; 2. Երիտասարդության արտադպրոցային դաստիարակություն:	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1 Ծրագրի նախահաշվի կազմում 1.2. Համայնքի փլված կուլտուրայի տան շենքը քանդել և շինակյուրը հնարավորինս օգտագործել համայնքային կենտրոնի կառուցման համար : 1.3 Կենտրոնի կառուցում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 40000.0 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 40000.0 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թ.թ.						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

«Ոռոգման համակարգի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ոռոգման հնարավորություն ստեղծել ևս 180 հեկտար վարելահողի համար :	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1500.0	500.0	500.0	500.0	500.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Կանխել ոռոգման ջրի կորուստները որոնք հասնում են 30-50% 2. Ոռոգման ջրի գյուղ հասնելու ժամանակը 2-4 ժամվա փոխարեն հասցնել 1-1.5 ժամի: 3. Ոռոգման ռեալ հնարավորություն ստեղծել 180 հեկտար վարելահողերի համար:	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն						
	1.1. Ոռոգման համակարգի վերանորոգման նախագիծ-նախահաշվի կազմում 1.2. Կառնուտի ջրամբարից սնվող ջրատարի կիսախողովակների ձեռքբերում:						
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ							
2.1. Ոռոգման ինքնահոս համակարգի հողային հունի վրանորոգում և գյուղը գոտևորող համակարգի կիսախողովակների մասնակի վերանորոգում:							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 3500.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3500.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի 158 տնտեսությունների տնամերձները և չջրվող վարելահողերից՝ 180 հեկտարը :						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021 թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է վերանորոգել Կառնուտի ջրամբարից սնվող ոռոգման համակարգի եւ գյուղի տնամերձ հողամասերը սնող ինքնահոս ոռոգման համակարգի կիսախողովակները: Կառնուտի ջրամբարից սնվող համակարգը սկսվում է Ազատան գյուղից եւ հասնում մինչև երկաթգծին հարող դաշտերը: Այս համակարգով հնարավոր է ոռոգել 180 հ: Իսկ ինքնահոս ջրի համակարգը սկսվում է Ազատան գյուղից եւ գոտեվորելով գյուղը հասնում մինչև գյուղի արեվմտյան հատվածի վերջը: Վերջինիս 1.8 կմ հատվածը հողային հունով ջրատար ակոս է:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

«Հակակարկտային երկու կայանների ձեռքբերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Առավել ամբողջական դարձնել համայնքի հակակարկտային համակարգը:						
Ծրագրի անմիջական նպատակ Համայնքում եղած 2 հակակարկտային կայաններին ևս 2 կայանի ավելացումը թույլ կտա էականորեն նվազեցնել համայնքի ցանքերի-կարկտահարության ռիսկերը:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			5000.0	-	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Մարզի հարավային դարպասներից կարկտաբեր ամպերի մուտքի կանխարգելում:	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1 Կարկտակայանների ձեռքբերում, տեղադրում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝5000.0հազար.դրամ Ընդհանուր բյուջեն՝5000.0 հազար.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի ցանքատարածությունների հնարավոր մաքսիմալ բարձրացման համար ևս երկու հակակարկտային կայանների տեղադրում:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

«Համայնքի գազաֆիկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության ապահովում բնական գազով:						
Ծրագրի անմիջական նպատակ Գյուղում ապահովել բնական գազի մատակարարում:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			250000.0	-	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Կբարելավվի բնակչության կյանքի որակը: 2. Կլուծվի բնակչության ջեռուցման խնդիրը: 3. Համայնքի տնտեսությունները եղած օրգանական աղբը կօգտագործեն պարարտացման համար: 4. Երիտասարդությունը չի լքի համայնքը,կնվազի արտագաղթը:	5.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	6.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1ծրագրի նախագիծ- նախահաշվի թարմացում: 1.2. Գազատարի կառուցման համար խողովակաշարի կառուցում: : 1.3.Ներհամայնքային գազատարի կառուցում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր250000.0հազար դրամ ըստ յոթ համայնքների կողմից կազմված միասնական նախահաշվի: Ընդհանուր բյուջեն 250000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը պետք իրականացնել մարզի Բայանդուր, Երազգավորս, Ղարիբջանյան, Առափի, Ոսկոհասկ Ախուրիկ և Գետք համայնքների համար, որոնք բոլորն էլ գազաֆիկացված չեն և ունեն տարիներ առաջ համատեղ կազմված նախագիծ- նախահաշիվ որով նախատեսվել էր հիմնական գազատարի կառուցում մինչև համայնքներ և ներտնտեսային գազատարների անցկացում:Նշված ահմայնքները գտնվում են հայ-թուրքական սահմանագծի հարևանությամբ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

«Դրենաժային համակարգի վերանորոգում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի տարածքի գրունտային ջրերի հեռացում:						
Ծրագրի անմիջական նպատակ Բնակֆոնդի պահպանում, տնամերձների լիակատար օգտագործում:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000.0	5000.0	5000.0	5000.0	1000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Գրունտային ջրի դրենաժային համակարգի խցանումների վերացում:	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	4.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն</p> <p>1.1 Դիմել ՀՀ կառավարություն և Շիրակի մարզպետարան խնդրանքով, որպեսզի այս ծրագիրը ներառվի կառավարության համանման ծրագրերի իրականացման ցանկում:</p> <p>1.2 Ծրագրի նախահաշվի կազմում</p> <p>1.3. Դրենաժի 1.5 կմ հատվածի խցանվածքներում փորման, մաքրման և ծածկման աշխատանքների կատարում:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 17000.0 հազար դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 17000.0 հազար դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել որևէ դոնոր կազմակերպություն կամ դոնոր ծրագիր գտնելու պարագայում: Իսկ դոնոր չգտնվելու պարագայում, կախված համայնքի ֆինանսական հնարավորություններից նախատեսվում է ծրագիրը կատարել մի քանի էտապով 2017-2021թթ. ընթացքում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երկրաշարժից հետո գյուղի տարածքը գերխոնավ է գրունտային ջրերի բարձրացման պատճառով: Ծրագրով նախատեսվում է գյուղի դրենաժային համակարգի խցանումների վերացում, որով բնակարանները կազատվեն խոնավությունից, իսկ տնամերձները գերխոնավությունից:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 6

«Գիշերային լուսավորության համակարգի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղի գիշերային լուսավորության համակարգի նորոգում և արդիականացում:						
Ծրագրի անմիջական նպատակ Գյուղում կառուցված գիշերային լուսավորության ամբողջականացում և էներգախնայող համակարգերի ներդրում::	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1500.0	250.0	250.0	250.0	250.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Համայնքային կյանքի կենսամակարդակի բարձրացում:	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1ծրագրի նախահաշվի կազմում 1.2. Համայնքի լուսավորության համակարգի մնացած հատվածի կառուցում ,անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների կատարում: 1.3Անցում էներգախնայող լուսավորության համակարգի:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր՝2500.0հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝2500.0հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքն ունի գիշերային լուսավորության 62 լուսակիր,24-ը հին են,կարիք կա փոխելու, կարիք կա ևս 21 լուսակիր տեղադրելու:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 7

«Անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Լրացնել համայնքին անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի պակասը:							
Ծրագրի անմիջական նպատակ Ձեռք բերել վարող և բազմաֆունկցիոնալ տրակտորներ,ցանքերի սրկման ագրեգատ,հացահատիկի կոմբայն:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
			1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Ցանքերի թունաքի-միկատների սրկման ագրեգատ համաքում չկա,հակավորող մեքենայի խիստ կարիք կա:	2.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
	3.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1ծրագրը շարունակական է 1.2.							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝7500.0հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝7500.0հազար.դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ								
Ծրագրի հիմնական ռիսկերը								
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնքի բնակիչներ:							
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Եղած գյուղտեխնիկան ԽՍՀՄ արտադրության է,մաշված,կարիք ունի թարմացման:Գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու համար:							

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 8

«Ճանապարհների և փողոցների բարեկարգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բարեկարգել գյուղամիջյան փողոցները և դաշտա-միջյան ճանապարհները						
Ծրագրի անմիջական նպատակ Ապահովել ճանապարհների անցանելիությունը	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2500.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	5.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1 Բարեկարգել համայնքի կետրոնական 5-րդ փողոցը և հնարավորինս շարունակել ասֆալտապատումը: 1.2. Կատարել գյուղամիջյան և դաշտամիջյան կարևոր ճանապարհների փոսալցումներ:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 12500.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 12500.0 հազր դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. Համայնքի տարածքում (առանց բնությանը վնասելու) գտնել բավարարաչափ հողի և խեճի պաշարներ 2. Աշխատանքներն իրականացնելու համար ձեռք բերել բավարարաչափ տրանսպորտային նյութեր (դիզ. վառելիք) 3. Կազմակերպել հողի և խեճի տեղափոխման ու ճանապարհների հարթեցման աշխատանքները						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագիրը շարունակական է						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապարհները որոշ հատվածներում քայքայված են, դժվար անցանելի: 1 կմ ասֆալտապատ ճանապարհ կարիք ունի ասֆալտապատման, 4 կմ գրունտային ճանապարհի հարթեցում եւ խճապատում է նախատեսում ծրագիրը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 9

«Աղբահանություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ապահովել համայնքի տարածքի մաքրությունը և շրջակա միջավայրի պահպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ Սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում:	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			250.0	250.0	250.0	250.0	250.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1 Աղբավայրի ցանկապատում և հողաձածկում: 1.2 Գյուղի տարածքից աղբահանության կազմակերպում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 1250.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1250.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագիրը շարունակական է						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<i>Առանձնացվել է աղբավայր ,կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:</i>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր 10

«Հուշարձանի վերանորոգում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մեծ Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի վերականգնում և տարածքի բարեկարգում:						
Ծրագրի անմիջական նպատակ Հուշարձանի պահպանություն	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			950,0	50,0	50,0	50,0	50,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություն 1.1 Երկրաշարժի պատճառով ընկած քարերի վերականգնում: 1.2 Գրատախտակի վերանորոգում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 200,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 950,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1150,0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Գետքի համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021 թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երկրաշարժից տուժել է, հուշարձանի քարերից մի քանիսը ընկել են, գրատախտակի ծածկը քայայվել է: Անհրաժեշտ է կանաչապատել և բարեկարգել տարածքը:						